

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**2 նոյեմբերի 2018թ.  
ք.Երևան**

**N 89-Ա**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ  
2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 9-ԻՆ ԿԱՅԱՆԱԼԻՔ ԱՐՏԱՀԵՐԹ  
ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԸՆՏՐԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ  
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ, ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ  
ՑՈՒՑԱԿՈՒՄ ԸՆԴԳՐԿՎՈՂ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ԹԻՎԸ  
ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 51-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով, 83-րդ հոդվածի 9-րդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության կողմից ըստ ընտրական տարածքների ընտրողների թվի վերաբերյալ տրամադրված տեղեկանքը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է**

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2018 թվականի դեկտեմբերի 9-ին կայանալիք արտահերթ ընտրություններին յուրաքանչյուր ընտրական տարածքում կուսակցության, կուսակցությունների դաշինքի տարածքային ընտրական ցուցակում ընդգրկվող թեկնածուների առավելագույն թիվը՝ համաձայն հավելվածի:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ**

**Տ.Մուկուչյան**

**Հավելված**  
**Հայաստանի Հանրապետության**  
**կենտրոնական ընտրական հանձնաժողովի**  
**2018թ. նոյեմբերի 2-ի N 89-Ա որոշման**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ**  
**2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 9-ԻՆ ԿԱՅԱՆԱԼԻՔ ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ**  
**ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԸՆՏՐԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ, ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ**  
**ԴԱՇԻՆՔԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՑՈՒՑԱԿՈՒՄ ԸՆԴԳՐԿՎՈՂ ԹԵԿՆԱԾՈՒՆՆԵՐԻ**  
**ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ԹԻՎԸ**

Ընտրական տարածք	Ընտրական տարածքի տարածքային ընդգրկումը	Ընտրական տարածքում ընտրողների թիվը՝ ըստ ընտրողների ռեգիստրի	Ընտրական տարածքի տարածքային ընտրական ցուցակում ընդգրկվող թեկնածուների առավելագույն թիվ
Թիվ 1 ընտրական տարածք	Երևան քաղաքի Ավան, Նոր Նորք, Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջաններ	200.112	13
Թիվ 2 ընտրական տարածք	Երևան քաղաքի Արաբկիր, Աջափնյակ, Դավթաշեն վարչական շրջաններ	213.628	14
Թիվ 3 ընտրական տարածք	Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա, Շենգավիթ վարչական շրջաններ	225.223	15
Թիվ 4 ընտրական տարածք	Երևան քաղաքի Կենտրոն, Նորք-Մարաշ, Էրեբունի, Նուբարաշեն վարչական շրջաններ	209.035	13
Թիվ 5 ընտրական տարածք	Արարատի մարզ	221.655	14
Թիվ 6 ընտրական տարածք	Արմավիրի մարզ	233.632	15
Թիվ 7 ընտրական տարածք	Արագածոտնի մարզ	117.534	7
Թիվ 8 ընտրական տարածք	Գեղարքունիքի մարզ	188.045	12
Թիվ 9 ընտրական տարածք	Լոռու մարզ	237.837	15
Թիվ 10 ընտրական տարածք	Կոտայքի մարզ	239.847	15
Թիվ 11 ընտրական տարածք	Շիրակի մարզ	229.542	15
Թիվ 12 ընտրական տարածք	Սյունիքի և Վայոց ձորի մարզեր	151.687	10
Թիվ 13 ընտրական տարածք	Տավուշի մարզ	107.139	7